

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ի դեմս իր երևանյան գրասենյակի (այսուհետև՝ ԵԱՀԿ) և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետև՝ Նախարարություն),

հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՀԿ-ին վստահվել է “Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի գնահատման հետազոտության” ծրագրի իրականացումը, վարչական, տեխնիկական ու ֆինանսական օժանդակությունը և մոնիթորինգը (այսուհետև՝ Ծրագիր),

նկատի ունենալով, որ Նախարարությունը համաձայն է ընդունել Ծրագրով նախատեսված վարչական, տեխնիկական և ֆինանսական օժանդակությունը և ակտիվորեն համագործակցել հասնելու Ծրագրով սահմանված նպատակներին,

համաձայնության եկան ներքոհիշյալի մասին.

Հոդված 1. Ծրագիրը

Սույն Հուշագրի առարկա հանդիսացող Ծրագիրը նկարագրված է ծրագրային փաստաթղթում, որը կից ներկայացված է սույն Հուշագրին և հանդիսանում է սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 2. Ծրագրի տևողությունը

Ծրագիրը ուժի մեջ է մտնում սույն Հուշագիրը ստորագրելուց անմիջապես հետո և ավարտվելու է 18 (տասնութ) ամսվա ընթացքում՝ Ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հոդված 3. ԵԱՀԿ պարտավորությունները

ԵԱՀԿ-ն պարտավոր է՝

ա) կազմակերպել, ֆինանսավորել և իրականացնել գնահատման հետազոտությունն անցկացնող ընկերության ընտրության մրցութային ընթացակարգը,

բ) կազմակերպել, ֆինանսավորել և իրականացնել վերահսկողություն գնահատման հետազոտության անցկացման նկատմամբ՝ կից ներկայացված ծրագրային փաստաթղթում նախատեսված կարգով,

գ) ցուցաբերել տեխնիկական աջակցություն՝ ներգրավելով համապատասխան փորձառություն ունեցող տեղական և միջազգային փորձագետների: Փորձագետների հավաքագրումը իրականացնել ըստ ԵԱՀԿ կանոնակարգիչ դաշտի,

դ) պահպանել ակտիվ հաղորդակցություն Նախարարության հետ՝ Ծրագրով նախատեսված գործողությունների առաջընթացի և արդյունքների վերաբերյալ:

Հոդված 4. Նախարարության պարտավորությունները

Նախարարությունը պարտավոր է՝

ա) նշանակել փորձագետների կամ պաշտոնյաների, որոնք միջազգային փորձագետների հետ կմասնակցեն կարիքների գնահատմանը և կապահովեն ծրագրով նախատեսված աշխատանքների պատշաճ համակարգումը պետական այլ մարմինների ու շահագրգիռ կողմերի հետ,

բ) ապահովել գնահատման հետազոտության արդյունքների անհրաժեշտ գործողությունների ժամանակին իրականացումը, ներառյալ արտոնագրերի, մասնագիտական սարքավորումների մաքսազերծման աջակցության և տեխնիկական տվյալների կամ անհրաժեշտ այլ տեղեկությունների տրամադրման հարցերը,

գ) ԵԱՀԿ-ի կողմից պայմանագրային հիմունքներով վարձված փորձագետների և ընկերության համար, հետազոտության նպատակով, ապահովել տեղանք մուտք գործելու հնարավորության մատչելիություն,

դ) համակարգել Ծրագրի շրջանակներում պատրաստված հաշվետվության նախագծի վերաբերյալ շահագրգիռ ազգային մարմինների նկատառումները և դրանք ԵԱՀԿ-ին փոխանցել հաշվետվությունը ստանալուց 15 օրվա ընթացքում,

ե) պահպանել ակտիվ հաղորդակցություն ԵԱՀԿ-ի հետ՝ Ծրագրով նախատեսված գործողությունների առաջընթացի և արդյունքների վերաբերյալ,

զ) համատեղ կազմակերպել և վարել ներդրողների կորրեկցիաների հանդիպումներ:

Հոդված 5. Բյուջե

1. Ծրագրային փաստաթղթում նշված Ծրագրի բյուջեն կազմում է սույն Հուշագրի անբաժանելի մասը:

2. ԵԱՀԿ-ն Ծրագրի ֆինանսավորման համար կտրամադրի ոչ ավելի քան 201,500.00 (երկու հարյուր մեկ հազար հինգ հարյուր) եվրո:

3. Ծրագրի իրականացման աշխատանքների համար ֆինանսական միջոցները պետք է օգտագործվեն՝ ըստ ԵԱՀԿ-ի ֆինանսական կանոնների:

Հոդված 6. Պատասխանատվությունը

1. Նախարարությունը կհատուցի ԵԱՀԿ աշխատակիցների, փորձագետների և ԵԱՀԿ-ի համար ծառայություններ մատուցող անձանց հնարավոր կորուստները, որոնք

կարող են առաջանալ ծրագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև կապշտպանի սույն Ծրագրից ծագող կամ դրա հետ կապված բոլոր կարգի մեղադրանքներից, հայցերից, պահանջներից և ցանկացած բնույթի ու տեսակի պատասխանատվությունից:

2. Նախարարությունը և վերջինիս ղեկավարությամբ գործող անձնակազմը պետք է գերծ մնան այնպիսի գործողություններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ԵԱՀԿ-ի համբավի և կարգավիճակի վրա:

Հոդված 7. Գովազդումը

ԵԱՀԿ-ի կողմից Ծրագրին ցուցաբերվող տեխնիկական և ֆինանսական աջակցությունը կլուսաբանվի Ծրագրի մասին պատրաստված ցանկացած հրատարակություններում: Անհրաժեշտության դեպքում նախարարություններն իրենց հրատարակություններում, ելույթներում և մամլո հրապարակումներում կամ լրատվության նմանատիպ այլ միջոցներով պետք է հաստատեն ԵԱՀԿ-ի և ներդրող երկրի, ԱՄՆ-ի մասնակցությունը:

Հոդված 8. Հաղորդակցությունը

Ծրագրի իրականացման հետ կապված ողջ հաղորդակցությունը պետք է հասցեագրված լինի՝

ՀՀ ԱԻՆ անունից

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի անունից

փ/ծ գնդապետ Հովհաննես Եմիշյան,
ՀՀ ԱԻՆ ՀՓԾ բնակչության և
տարածքների պաշտպանության
վարչության պետ

Վիլյամ Հենլոն
ԵԱՀԿ երևանյան գրասենյակի
Տնտեսական և բնապահպանական ծրագրի
պատասխանատու

Հասցե՝ Պուշկինի 25, Երևան, 0010,
Հայաստանի Հանրապետություն
Հեռ: +374 10 53-87-75
Ֆաքս՝ +374 10 53-43-79

Հասցե՝ Սունդուկյան 64/1, Երևան, 0012,
Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374 10 22-96-13
Ֆաքս՝ + 374 10 22-96-15

Էլ-փոստ՝ hovhannes.yemishyan@mes.am

Էլ-փոստ՝ william.hanlon@osce.org

Հոդված 9. Վեճերի լուծումը

Սույն Հուշագրից և Ծրագրից բխող կամ վերջիններիս հետ կապված բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ պահանջները լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Եթե Կողմերին չի հաջողվում վեճը լուծել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունները սկսելու պահից իննսուն (90) օրվա ընթացքում, ապա այն կարգավորվում է իրավարարական (արբիտրաժային) դատարանի միջոցով: Իրավարարական (արբիտրաժային) դատարանը վեճի լուծման ընթացքում ղեկավարվում է UNCITRAL (ՄԱԿ-ի միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով) կանոններով: Մեկ դատավոր է նշանակվելու՝ վերջնական և կատարման համար պարտադիր որոշումներ կայացնելու լիազորություններով: Արբիտր նշանակելու իրավունքը վերապահվում է Հաագայի իրավարարական (արբիտրաժային)

դատարանին: Դատավարության վայրն է՝ Վիեննան, իսկ դատավարության լեզուն՝ անգլերենը:

Հոդված 10. Արտոնությունները և անձեռնամխելիությունը

Սույն Հուշագրում, այդ թվում նաև դրա հավելվածներում, ներառված դրույթները չպետք է սահմանափակեն ԵԱՀԿ-ի և նրա աշխատակազմի համար սահմանված արտոնությունները և անձեռնամխելիությունը:

Հոդված 11. Ուժի մեջ մտնելը, դադարեցումը և փոփոխումը

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է մինչև Հուշագրից թիող պարտականությունների իրականացումը, եթե Կողմերից մեկը չի որոշում վաղաժամկետ դադարեցնել Հուշագիրը՝ այդ մասին 30 օր առաջ տեղեկացնելով դիվանագիտական կապուղիներով:

2. Ծրագրի իրականացումը կախված կլինի վերը նշված նախադրյալների կատարումից կամ հավանական կատարումից՝ ի բավարարումն ԵԱՀԿ-ի: Եթե նախադրյալներից մեկի կամ մի քանիսի կատարումը ձախողվում է, ԵԱՀԿ-ն կարող է իր հայեցողությամբ շարունակել, կասեցնել կամ դադարեցնել ծրագրի կամ դրա բաղադրիչների իրականացումը:


3. Ծրագրի իրագործելիությունը կասկածի տակ դնող կամ Ծրագրում էական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջացնող հանգամանքներ ծագելու դեպքում Կողմերը, նախքան Ծրագիրը շարունակելը կամ նախքան նմանատիպ փոփոխություններ մտցնելը, այդ մասին պետք է գան համաձայնության:

4. Սույն Հուշագրում բոլոր փոփոխությունները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:


Կատարված է Երևան քաղաքում, **7 նոյեմբերի, 2011թ.**, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն և անգլերեն լեզվով: Տարաբնույթ մեկնաբանությունների դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տարբերակին:

«Արտակարգ իրավիճակների
նախարար

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
պաշտոնակատար



Արմեն Երիցյան



Կարել Հոֆստրա

Հավելված

Ծրագրի նկարագիրը, ներառյալ նախահաշվային ծախսերի բյուջեն

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի գնահատման հետազոտություն

1982թ. Խորհրդային միության տարիներին Երևանի Նուբարաշեն թաղամասում գտնվող բլուրում թաղվել են մոտ 500 տոննա ժամկետանց պեստիցիդներ և կայուն օրգանական աղտոտիչներ, այդ թվում՝ ԴԴՏ: 2010թ. տեղանքը բացվել է, որը էկոլոգիական արտակարգ իրավիճակ է ստեղծել, քանի որ ԴԴՏ-ն ներթափանցել է շրջակա միջավայր: ԵԱՀԿ-ն արձագանքել է ՀՀ կառավարության խնդրանքին և վարձել է փորձագետ, որը տեղացի մասնագետների հետ միասին ստեղծել է տեղանքի արտակարգ իրավիճակի գործողությունների ծրագիր: Սա կատարվել է Շրջակա միջավայրի և անվտանգության (ENVSEC) ծրագրով: Ծրագրի համաձայն տեղանքը ծածկվել է կառավարության կողմից, սակայն տեղանքից այլ արտանետումների վտանգը շատ մեծ է, քանի որ տեղանքը գտնվում է բլուրի ակտիվ սողանքային գոտում, որը շատ մոտ է բնակավայրերին ու գյուղատնտեսական գոտիներին:

ՀՀ Կառավարությունը խնդրել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին (Գրասենյակ) շարունակել հաջորդ փուլի իրականացումը, որն է՝ գնահատման հետազոտության իրականացում: Այս ուսումնասիրությամբ կհատկորոշվեն տեղանքից շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը սպառնացող ռիսկերը, լցոնված նյութերի բաղադրությունն ու գեոֆիզիկական իրավիճակը և կառաջարկվեն տեղանքի վերջնական վնասագերծման մի քանի տարբերակներ:

Սույն Ծրագիրն ուղղված է հետևյալին՝

- իրականացնել Նուբարաշենի տեղանքի տեխնիկական իրագործելիության գնահատում,
- իրականացնել Նուբարաշենի գերեզմանոցի տարածքում գտնվող գյուղերում առողջական ռիսկերի գնահատում,
- աշխատել պետական պաշտոնյաների հետ՝ գնահատման հետազոտության մշակման հետ կապված նրանց կարողությունները հզորացնելու համար,
- արդյունքները ներկայացնել ներդրողներին՝ Նուբարաշենի տեղանքը վնասագերծելու ու բացահայտված առողջական ռիսկերը լուծելու նպատակով գումար հավաքելու համար:

Աշխատանքներն ու արդյունքները ներառում են՝

- վերահսկիչ հանձնաժողովի ձևավորում՝ բաղկացած պաշտոնատար անձանցից, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներց ու ներդրողներից:
- Գնահատման հետազոտության համար մրցույթի հայտարարում, ներառյալ՝
 - գեոֆիզիկական ուսումնասիրության կատարում, որը կորոշի տեղանքի ճշգրիտ չափերը, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայության

հավանականությունն ու տեղանքի տակ ու շրջակայքում գտնվող շերտերի երկրաբանական կառուցվածքը,

- սողանքի ու հողի էրոզիոն ռիսկի վերլուծություն կատարում,
 - տեղանքի նմուշառման կատարում՝ ժամկետանց պեստիցիդների/կայուն օրգանական աղտոտիչների(պեստիցիդների) և հողում առկա հնարավոր այլ նյութերի բաղադրությունը հստակ որոշելու համար,
 - առողջական ռիսկի հետազոտության կատարում՝ որոշելու, թե արդյոք որևէ ազդեցություն եղել է մարդկանց առողջության վրա,
 - տեղանքի վնասազերծման առաջարկությունների կատարում՝ ֆինանսավորման տարբեր սցենարների և գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիայի ու էկոլոգիական լավագույն փորձի հիման վրա,
 - վերջնական զեկույցի ներկայացում, որը կներառի հետազոտությունների բոլոր արդյունքները, գնահատումներն ու առաջարկությունները:
- Հայտարարել առողջական ռիսկի հետազոտության մրցույթ, որը ներառում է առողջության ուսումնասիրություն՝ զուգակցված արյան անալիզով:
 - Ընտրել և պայմանագիր կնքել ընկերության հետ, որը կկատարի գնահատման ուսումնասիրություն: Ընտրությունը կկատարվի վերահսկիչ հանձնաժողովի կողմից՝ միջազգային փորձագետի խորհրդատվության հիման վրա:
 - Կատարել գնահատման ուսումնասիրություն՝ մանրակրկիտ վերահսկմամբ:
 - Ներկայացնել գնահատման վերջնական ուսումնասիրությունը և անցկացնել ներդրողների համաժողով:

Ծրագրի ֆինանսական միջոցներ (EUR)

6102: Այլ պայմանագրային ծառայություններ/ Իրագործելիության ուսումնասիրության պայմանագիր	200000
6206: Կոնֆերանսներ/Ունակությունների զարգացում – Տարածքի և սարքավորումների վարձույթ	1250
6209: Կոնֆերանսներ/Ունակությունների զարգացում – Այլ՝ հյուրասիրություն, ջուր	250
Ընդամենը	201500
Ամբողջ ծրագրի ընդամենը՝	EUR 201500